



Սոցիալական ցանցերում ներկայության ուղեցույց ՄՆԿ աշխատակիցների համար

Նախաբանի փոխարեն

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (ՄՆԿ) հաճախ մասնակցում է մասնագիտական կանոնագրերի, օրենսդրական առաջարկների ստեղծման աշխատանքներին, հանդես գալիս հայտարարություններով, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն: Կարևորելով խոսքի ազատությունը, հաշվի առնելով համացանցի ընձեռած հնարավորությունները, կազմակերպությունը խրախուսում է իր աշխատակիցների ներգրավվածությունն ու բավանասավորված գործողությունները՝ ինչպես իրական կյանքում, այնպես էլ առցանց տիրույթում:

ՄՆԿ-ն իր աշխատակիցներին առաջարկում է սոցիալական ցանցերի վարքականոն-ուղեցույց և կոչ անում հետևել դրան՝ կազմակերպության կերպարի ձևավորմանը, արժեքների տարածմանը, և իր աշխատակիցների հնարավոր խնդրիներից ու թյուրիմացություններից խուսափելու համար:

Այս փաստաթուղթը հավելումն է ՄՆԿ-ի կանոնադրության, կազմակերպության ներքին կանոնակարգի և լրագրողների վարքականոնի, հետևաբար ՄՆԿ աշխատակիցը սոցիալական ցանցերում իր գործունեության ընթացքում ունի նախնառաջ վերոնշյալ փաստաթղթերով ամրագրված իրավունքներն ու պարտավորվածությունները, հավատարիմ է կազմակերպության բոլոր սկզբունքներին ու արժեքներին:

Սոցիալական ցանցերի վարքականոն

Սոցիալական մեդիա-հարթակները ծառայում են թե՛ անձնական, թե՛ մասնագիտական նպատակներին, ընդ որում, դրանք երբեմն միախառնվում են՝ առաջացնելով հարցեր, կասկածներ, տարաձայնություններ: Նման իրավիճակներից խուսափելուն է ուղղված այս վարքականոնը:

1. Թեև ՄՆԿ-ն խրախուսում է իր աշխատակիցների ակտիվ ներգրավվածությունն ու ներկայությունը սոցցանցերում, այդուհանդերձ, աշխատանքային ժամերին առաջին տեղում աշխատանքն է. մի թույլ տվեք, որ սոցցանցերը խլեն Ձեր աշխատաժամանակը, եթե, իհարկե, դա Ձեր պարտականությունների անմիջական մասը չի կազմում:
2. Մարդու իրավունքներն ու արժանապատվությունն առաջնային են:



3. Սոցցանցերում մի կատարեք գրառումներ, մի տարածեք հայտարարություններ, լուսանկարներ, տեսանյութեր, այլ ձևաչափի նյութեր, որոնք կարող են որևէ կերպ վիրավորել մարդու ազգային, ռասայական, կրոնական, սեռական պատկանելիությունը, ընկալվել որպես խտրականության դրսևորում կամ ատելության խոսք:
4. Մի հրապարակեք կամ տարածեք բռնություն քարոզող, պոռոնոգրաֆիկ բովանդակություն, լուսանկարներ ու տեսանյութեր, մոլախաղերի գովազդ:
5. Սոցցանցերում մի զբաղվեք կուսակցական քարոզչությամբ, կամ կուսակցական գործիչների փառաբանմամբ, կուսակցական նշաններ կամ դրոշմներ մի օգտագործեք որպես սոցցանցերում ձեր անձնական հաշիվների գլխավոր նկար (profile picture, cover photo և այլն), այս կամ այն քաղաքական գործչի, հասարակական անձի հասցեին անպարկեշտ արտահայտություններ, պիտակավորումներ պարունակող գրառումներ և այլ տեսակի նյութեր մի տարածեք, խուսափեք նման քննարկումներում ներգրավվելուց: Սա վերաբերում է ՄՆԿ յուրաքանչյուր աշխատակցի, նույնիսկ եթե նա քաղաքական կուսակցության անդամ կամ համակիր է: Իսկ եթե ՄՆԿ լրագրող էք, այս կանոնին հետևեք անվերապահորեն. հանրայնորեն մի արտահայտեք ձեր քաղաքական դիրքորոշումները:
6. Մշտապես հիշեք, որ Դուք մեդիա կազմակերպության աշխատակից եք, հետևաբար խուսափեք սուտ, կասկածելի, անհստակ, չճշտված ինֆորմացիա տարածելուց՝ անկախ դրա թեմայից: Իսկ եթե ՄՆԿ-ում աշխատում եք լրագրողի պաշտոնում, դուք լրագրող եք մշտապես և ամենուր՝ աշխատանքային, ոչ աշխատանքային օրերին, արձակուրդի ընթացքում, աշխատավայրում, տանը, սրճարանում... Հիշեք այդ մասին և մի կատարեք գրառումներ, որոնք դեմ են լրագրողական էթիկային ու սկզբունքներին:
7. Եղեք պատասխանատու, և եթե այնուամենայնիվ սխալ տեղեկություն եք տարածել, անմիջապես ուղղեք սխալը և այդ մասին տեղեկացրեք ձեր սոցցանցային ընկերներին ու հետևորդներին՝ կախված իրավիճակից՝ խմբագրելով, մեկնաբանության կամ նոր գրառման միջոցով: Եթե նկատել եք նման սխալ Ձեր գործընկերոջ մոտ, տեղեկացրեք նրան այդ մասին



անձնական նամակով, հեռախոսազանգով, ոչ հանրային որևէ կապի միջոցով: Հարգեք Ձեր օնլայն լսարանին, պատասխանեք Ձեր գրառումների տակ արված մեկնաբանություններին, անձնական նամակներին, հարգեք այլոց կարծիքը, պատրաստ եղեք լսել այլ տեսակետներ, բանավիճեք, բայց մի վիճեք:

8. Համարեք, որ օնլայն տիրույթում ձեր յուրաքանչյուր գրառում, տարածած հղում, գրած մեկնաբանություն հանրային է կամ կարող է մի օր դառնալ հանրային, նույնիսկ եթե սահմանափակ լսարանի համար է (փակ խմբեր, խմբային չատեր) կամ ընկերոջն ուղարկված անձնական նամակ է: Հետևաբար, ինչպես հանրային, այնպես էլ անձնական առցանց խոսակցություններում մի արեք արտահայտություններ, որոնք կարող են այս կամ այն կերպ ազդել ինչպես Ձեր, այնպես էլ կազմակերպության վարկանիշի վրա:
9. Ձեռնպահ մնացեք սոցիալական ցանցերում կազմակերպության քաղաքականությանը, պաշտոնական տեսակետին, գործողություններին և գործունեությանը հակասող կարծիք հայտնելուց, եթե նման քաղաքականությունն արձանագրված է Ձեր ստորագրած որևէ փաստաթղթով:
10. Սոցցանցերում մի հանրայնացրեք կազմակերպության ներքին փաստաթղթերը, հարցերն ու խնդիրները, ֆինանսական և իրավական մանրամասները, աշխատանքային օֆլայն և օնլայն խոսակցություններն ու քննարկումները՝ նամակագրություններ, ժողովների մասին հայտարարություններ, դրամաշնորհներին ներկայացված, բայց դեռևս չհաստատված կամ մերժված նախագծեր, որոնք կարող են ապագայում իրականացվել, ՄՆԿ օրացույցային նշումները, եթե, իհարկե, այն պաշտոնապես հանրայնացված չէ: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը նախընտրում է, որ կազմակերպության գործունեության վերաբերյալ գրառումներն արվեն ու տարածվեն նախևառաջ ՄՆԿ կայքերում կամ սոցցանցային էջերում ու հաշիվներում:
11. ՄՆԿ-ի անունից պաշտոնական գրառումներ կամ մեկնաբանություններ անելու իրավունք ունեն կազմակերպության տնօրենը, բաժինների/ծրագրերի ղեկավարները, հաղորդակցության մենեջերը,



որոշ դեպքերում՝ հատուկ նշանակված անձը: Եթե դուք այդ աշխատակիցը չեք, լսարանի համար հստակեցրեք, որ դա միայն Ձեր անձնական դիրքորոշումը կամ կարծիքն է: Իսկ կազմակերպության վարկանիշին ուղղակիորեն առնչվող խոսակցություններին միանալիս նախապես քննարկեք կամ համաձայնեցրեք Ձեր անմիջական ղեկավարի, հաղորդակցության մենեջերի և/կամ ՄՆԿ գործադիր տնօրենի հետ:

12. Եթե այս փաստաթղթի որևէ դրույթ հակասում է Ձեր անձնական սկզբունքներին կամ այլ աշխատավայրում ստորագրած նմանատիպ փաստաթղթի, այս հարցը նույնպես քննարկեք Ձեր ղեկավարի և/կամ ՄՆԿ տնօրենի հետ: Ցանկացած բացառություն պետք է նախապես համաձայնեցված լինի: